

ները վոնտեցին արարներն Սպանիայէն, հաւածանքն սկսաւ հրէաներու դէմ: Բաղմաթիւ ընտանիքներ առ երեսս քրիստոնէութիւն ընդունեցին, թէեւ ներքնապէս հրէայ մնացին եւ դադանի կը շարունակէին իրենց հին պաշտամունքը: Այս հրէաները սպանիացիներէն կը կոչուէին Մառաններ, որ կը նշանակէ անիծեալ...

Այդ հալածանքներու ժամանակ շատ մը մառաններ ալ՝ ուրիշ հրէաներու հետ Սպանիայէն ու Փորթուկալէն դաղթած էին Հոլանտա, ուր ԺՁ դարուն ունէին փայլուն վիճակ: Արտաքնապէս իբր թէ քրիստոնեայ էին, բայց առիթը ներկայանալուն ցոյց կուտային իրենց հրէութիւնը: Միեւնոյն ձեւով մահմետականացան ԺԲ դարուն Սելանիկի շատ մը հրէաներ, որոնցմէ կազմուեցան տէօսնէ կոչուած ժողովուրդ մը, որու կրօնը խառնուրդ մըն է հրէութեան եւ իսլամի:

Մառաններէն շատեր մինչեւ նախարարութեան եւ եպիսկոպոսութեան աստիճանի բարձրացած էին Սպանիոյ մէջ: Բայց երբ Եղիսարէթ թագուհին եւ Յերտինանդ թագաւորը վերջնականապէս ազատեցին Սպանիան արարական լուծէն, որոշեցին արտաքսել նաեւ հրէաները, իբր արարներու ցեղակից եւ աւիական վերջին հետք: Այդ ատենները երկրին նախարարապետը հրէայ մըն էր — Իսահակ Աբրարանէզ — եւ երժսական նախարարն ալ մառան մը — Աբրահամ Սէնիօն:

Վարչապետը նախընտրեց հեռանալ Սպանիայէն քան ուրանալ իր կրօնը: Միեւնոյն ձեւով վարուեցան նաեւ մօտ երեք հարիւր հազար հրէաներ, որ ցրուեցան Մարօք, Թուրքիա եւ Հոլանտա:

Այս վերջին երկիրն, որ ապտամբած էր Սպանիոյ դէմ, սիրով ասպնջականութիւն շրջանորէն արդ նոր դաղթականներուն, որոնց մէջ կային նաեւ մեծ թուով մառաններ:

Մառան ազանգը արդէն անհետացած է, որովհետեւ շատերը բոլորովին քրիստոնէացած են հետզհետէ, իսկ մաս մըն ալ վերստին դարձած են հրէութեան:

ՔԱՊԱԼ

Շատ հին ժամանակներէ ի վեր Իսրայէլ

ունէր իր դադանի աւանդութիւնները, զոր միայն խորհրդագէտներն (initie') իրարու կը հաղորդէին եւ որ կը կոչուէր cabale:

Քապալը կը բաղկանար Եգիպտոսէն, Քաղդէաստանէն, Բաբելոնէն, Պարսկաստանէն եւ Յունաստանէն փոխ առնուած արտաւոյց դաղափարներէ: Անոր մէջ կային մոգութիւն, աստղագիտութիւն, բնագիտութիւն, բժշկական դիտելիք, ձեռնահմայութիւն, մէկ խօսքով՝ ամէն տեսակ իմաստակութեանց եւ անոտիապաշտութեանց հաւաքածոյ մը, որ դադանի կը պահուէր հասարակ ժողովուրդէն:

Քապալը դրուած էր հին կախարդազբոքերու կամ վեցհազարեակներու մէջ, զորս միայն մասնաւոր խորհրդագէտներ կրնային ունենալ ու կարդալ: Դէմքի եւ ձեռքերու մասնաւոր դիմեր ու ձեւեր կային, որոնք յայտարար նշաններ էին, թէ ենթական արժանի է Քապալին ծանօթանալու եւ շատ մը խորհրդագիտական փորձերէ յետոյ էր, որ ան կըրնար ընտանիքին մէջ ընդունուիլ:

Քապալի կախարդագիրքը կը կոչուէր «Մէֆէր հա զօհար», պայծառութեան գիրքը, եւ կը վերագրուէր Սիմոն Պէն Եօշայի մեծ բարունապետին, որ տասներեք տարի քարայրներու մէջ ապրած էր զայն գրի առնելու համար: Անգամ մը բոլորովին կորսուելէ վերջ Մովսէս ար Լեւոն անուն Սպանիացի հրէայի մը կողմէ վերստին գտնուած էր Յորդանանու ափունքէն Սպանիա հովերու հասանքներէն ըջուած թերթիկներու միջոցաւ...

Քապալը կ'ընդունէր Պիլթագորասի հոգևիփոխութիւնը եւ կ'ըսէր, թէ աշխարհի բոլոր հողիները մէկ անդամէն ստեղծուած են եւ անկէ ի վեր բնակարան կը փոխեն: Մեսիան պիտի յայտնուի այն ժամանակ, երբ բոլոր հողիներն ալ մաքրուած ըլլան, որով անոնք որ գէշ կեանքով մը կը ստիպեն իրենց հողին նոր շրջան մը եւս բոլորելու աշխարհի վրայ, պատճառ կ'ըլլան Մեսիայի դալստեան յապաղումին:

Հակառակ Աստուածաշունչին, Քապալը կ'ընդունէր ճիներու եւ յուշկապարիկներու երամակներ, որոնցմով լեցուած էր անջրպետը: Թիւերու եւ գիրերու տարօրինակ զուգադրութիւններով Քապալը կը հաշուէր մինչեւ